*վի 'ի գլուխն գիլան. և 'ի հարաւ կողմանէ 'ի ոտնէ տորոս լեռնէ առ հիւսիս, այն որ 'ի արևել կողմ սուլթանիու մինչև 'ի գլուխս ալանաց, և այն, որ 'ի հարաւ կոյս փոքր, յաղբակայ մինչև տայք յաշխարհն մեր և այն, որ արևմուտ կոյս մեծ անտիոքէ առ արևմուտ հիւսիս մինչև լճնօ պօնտօս, և 'ի լճնօ պօնտօսէ առ արևել հիւսիս մինչև տայք յաշխարհն մեր, և տայքու առ արևել մինչև 'ի գլուխս ալանաց 'ի ափն կասպից ծօվի, այս միջոց բոլոր յաշխարհն լերամբ, բըլրօք, անտառիւք, ծօվաւ, լճակաւ, գետաւ, աղբիւրօք, քաղաքաւ, գաւառաւ, դաշտիւք, գեղօրէիւք, տանիւք, բնակութենօք և զամենայն զոր ինչ 'ի յերեսս յերկրիս և խորս ծօվու և 'ի յեղումն գետորէից, աղբերաց, թէ բնութիւն մարդոյ՝ եթէ անասուն, կենդանեօք, գազանօք, սողնօք, թռչնօք և բոլոր երկիր ամենայն կենդանեօք տրուք և բերիւք անտառիւք կացցէ և մնասցէ երկիրն անուամբ Հայաստան և 'ի միջի նորայ բնակօղք 'ի բնութենէ մարդոյ Հայք, և ամենայն անասուն կենդանի 'ի յերեսս երկրի և 'ի խորս ծօվու հայոց, միաբան եղիցի ժառանգութիւն ազգին հայոց ո՛չ աւելանալ և ո՛չ պակասիլ քայլ մի 'ի յերկրէս, և սմայ պահպանեսցի տունն Հայոց ըստ Օրինօքն Հայաստանեայց մինչև յաւիտեան։*